

պես ածական առնել, այսինքն՝ լինել լրացյալ՝ ունենալով ածական լրացում, որ այսօրվա ըմբռնումով նշանակում է որոշիչ։ Նա բերում է այսպիսի օրինակ՝ «Դոքա յետինքդ մի ժամ գործեցին...», որտեղ, ըստ հեղինակի, «յետինքդ» բառը պետք է համարել դոճա դերանվան ածական լրացում³։

Կ. Ավետիքյանը նշում է, որ սա, դա, նա դերանունները «հատկապես գոյականներ են, առնելով ածական անուններ և դերբայներ՝ առջևից կամ ետև-վից՝ համաձայնելով հոլովով կամ թվով» և բերում է այսպիսի օրինակներ՝ «Դոքա յետինքդ», «Այլ նոցա ոչինչ օգնեաց լուր բանին՝ չամոքելոցն ի հնա-պանդութեան»⁴, որոնցում ցուցական դերանունները, ըստ հեղինակի, «յե-տինքդ» և «չամոքելոցն» բառերի լրացյալներն են։

Դ. Ավետիքյանի տեսակետին են կանգնած, նրա մտքերն ու օրինակները գրեթե նույնությամբ կրկնում են Միք. Սալլանթյանը⁵ և Գր. Փեշտըմալճյանը⁶։

Ա. Բագրատունին տարբերություն է տեսնում, ըստ կիրառության, մի կող-մից սա, դա, նա, մյուս կողմից՝ այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն դերանուննե-րի միջև։ Որովհետև վերջին վեց դերանունները կարող են որոշիչ դառնալ, նը-րանց անվանում է «ածական դերանուններ», իսկ սա, դա, նա դերանունները, քանի որ չունեն այդպիսի գործածություն, չի մտցնում «ածական» դերանուն-ների մեջ⁷։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ, ըստ Բագրատունու, սա, դա, նա դերանունները որոշչային հարաբերություն չեն կարող արտահայտել։

Վրթ. Չալըխյանը գտնում է, որ սովորաբար անկախ են գործածվում սա, դա, նա, իսկ գոյականների հետ, իբրև ածական՝ այս, այդ, այն դերանուն-ները⁸։

Աշ. Աբրահամյանի «Գրաբարի ձևոնարկում» ասվում է. «Ցուցական դե-րանուններից գոյական անունների հետ գործածվում են այս, այդ, այն, սոյն, ույն, նոյն դերանունները, իսկ սա, դա, նա դերանունները անկախ են և գոյա-կան անունների հետ չեն գործածվում»⁹։

Նույնպիսի կարծիք է հայտնում իր դիսերտացիոն աշխատության մեջ նաև Մ. Մինասյանը՝ «Սա, դա, նա դերանունները միշտ անկախ են և իբրև որոշիչ չեն գործածվում»¹⁰։

Ելնելով վերը շարադրվածից, կարելի է ասել, որ գրաբարի սա, դա, նա դերանունների հարցում հին և նոր քերականների մոտ գոյություն ունի հիմ-նականում երեք տարբեր պարծիք. 1. Ոմանք (Մեսրոպը Հարությունյան) գտնում է, որ գրաբարի սա, դա, նա դերանունները կարող են գործածվել, մեր այս-օրվա հասկացողությամբ, և՛ իբրև որոշիչներ, և՛ իբրև որոշյալներ։ 2. Ըստ

³ Մ Ե ս ր ո վ ր Հ ա ր ո թ յ ու ն յ ա ն, Քերականութիւն, Կոստանդնուպոլիս, 1808, էջ 359—360,

⁴ Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 417։

⁵ Միք. Սալլանթյան, Քերականութիւն գրաբար լեզուիս հայոց, Մոսկով, 1827, էջ 231—232։

⁶ Գր. Փեշտըմալճյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Կոստանդնուպոլիս, 1845, էջ 202։

⁷ Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 51 և 357։

⁸ Վրթ. Չալըխյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1852, էջ 153—154։

⁹ Աշ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 83։

¹⁰ Մ. Մինասյան, Հատկացուցիչ—հատկացյալ կապակցությունը գրաբարում, Երևան, 1960, էջ 190 (դիսերտացիա, պահվում է Երևանի պետ. համալսարանում)։

ոմանց էլ (Գ. Ավետիքյան, Միք. Սալլանթյան), այդ դերանունները կարող են գործածվել իբրև որոշյալներ, այսինքն՝ առնել որոշիչ լրացում: Ինքնին հասկանալի է, որ, ըստ նրանց, նշված դերանունները չեն կարող իբրև որոշիչ հանդես դալ: 3. Գրաբարի հին և նոր ուսումնասիրողներից ոմանք (Ա. Բագրատունի, Վ. Չալրիսյան, Աշ. Աբրահամյան) գտնում են, որ սա, դա, նա դերանուններն ունեն անկախ գործածություն և որոշիչ չեն դառնում:

Ի՞նչ կարելի է ասել այս երեք կարծիքների վերաբերյալ: Ամենից առաջ պետք է նշել, որ մենք ընդունելի ենք համարում վերջին կարծիքը և պաշտպանում այն: Մեսրոպը Հարությունյանը, Գ. Ավետիքյանը, Գր. Փեշտրմալճյանը և ուրիշներ, որոնք հնարավոր են համարում սա, դա, նա դերանունների հանդես դալն իբրև որոշիչներ, բերում են այնպիսի օրինակներ, որոնցում նշված դերանունները կատարում են ոչ թե որոշյալի, այլ բացահայտյալի պաշտոն: Իսկ Մեսրոպը Հարությունյանի բերած օրինակներից և ոչ մեկն էլ սա, դա, նա դերանվան թեքված ձև չէ, այլ՝ սոյն, դոյն, նոյն դերանուններին: Ահա նրանցից մի երկուսը՝ «ի սմին երկրի», «սովին չափով», «ըստ նորուն տեառն ձայնին»¹¹:

այ, Այս, այդ, այն դերանուններով արտահայտված որոշի-

Գրաբարի ձևաարկներում այս, այդ, այն, ինչպես նաև մյուս ցուցականների կիրառությունները համեմատաբար ավելի հանգամանորեն են ուսումնասիրված: Այս հարցում տարակարծություններն ավելի քիչ են:

Այս, այդ, այն դերանունները գործածվում են թե՛ իրի, թե՛ անձի անունների հետ և կատարում հիմնականում որոշիչ պաշտոն: Նկատի ունենալով այս հատկանիշը, գրաբարի քերականություններում նրանք հաճախ անվանվում են հենց «ածական» դերանուններ: Այս դերանուններն արտահայտում են հատկանիշի, երբեմն նաև առարկայի շտարբերակված իմաստ՝ ըստ 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերի նկատմամբ ունեցած հարաբերության: Այս դերանվամբ արտահայտվում է այնպիսի հատկանիշ, որը տարածությամբ կամ ժամանակով մոտ է գտնվում (կամ այդպես է մտածվում) 1-ին դեմքին և հեռու 2-րդ ու 3-րդ դեմքերից, այդ-ով արտահայտվողը՝ 2-րդ դեմքին և հեռու 1-ին ու 3-րդ դեմքերից, այն-ով արտահայտվողը՝ 3-րդ դեմքին և հեռու 1-ին ու 2-րդ դեմքերից: Այս, ինչպես հայտնի է, հատուկ է բոլոր ցուցական դերանուններին:

Այս, այդ, այն դերանուններով արտահայտված որոշիչները շարադասվում են գոյականից թե՛ առաջ, թե՛ հետո և երկու դեպքում էլ սովորաբար հոլովով ու թվով համաձայնում իրենց որոշյալի հետ: Համաձայնության մեջ նրանք դրսևորում են այնպիսի հատկանիշներ, որոնցով զգալիորեն տարբերվում են թե՛ մյուս դերանուններով, թե՛ այլ խոսքի մասերով արտահայտված որոշիչներից:

Նտադաս գործածվելիս այս, այդ, այն դերանունները սովորաբար ունենում են հետևյալ հիմնական օրինաչափությունները, որոնք արձանագրված են գրարարի գրեթե բոլոր քերականների կողմից.

1. Նրանք դրվում են երկար ձևերով (այսուրիկ, այսմիկ, այսոփիկ, այսոգիկ...).

¹¹ Մեսրոպը Հարությունյան, նշվ. աշխ., էջ 260.

2. Գոյականներն ստանում են համապատասխան դերանվան հոգը (ս, դ, ն)։

3. Գոյականի նախդիրները (զ, ի, ընդ...) կրկնվում են նաև դերանուններին՝

Ահա մի քանի օրինակ՝ «աւուրքն այնոքիկ» (Մատ., ԻԴ, 22), «տեսեամբդ այդուիկ» (ՂՓ, I, ԺԷ, 64), «լերինս այսմիկ» (Մատ., ԺԷ, 19), «կարապետին այնուրիկ» (Ոսկր., 145), «քաղաքին այնմիկ» (Թոռն., 202), «բանիւքս այսոփիւք» (ՊԹԱ, Դ, 17), «բանիցն այնոցիկ» (Մենդ., ԻԴ, 28)։ Նախդրավոր հոլովածներ՝ «յաշխարհիս յայսմիկ» (Մհ, I, ԻԴ, 140), «ի շարէս յայսմանկ» (ՂՓ, II, Լ, 121), «ի բանիցս յայսցանէ» (ՂՓ, II, ԻԷ, 110), «բնդ նախարարսն ընդ այնոսիկ» (Մհ, III, ԻԹ, 211), «զկողմանսն զայնոսիկ» (Մհ, II, ԶԷ, 235), ըստ աւուրս ըստ այսմիկ» (Բ Օր., Ժ, 15), «ըստ բանիդ ըստ այդմիկ» (Թիւք, ԼԲ, 20)։

Գրաբարի ցուցական դերանունները եզակի ուղղական և եզակի հայցական հոլովներում երկար ձևեր չունեն։ Այդ հոլովներում այս, այդ, այն դերանուններն ունեն միատեսակ կարճ ձևեր, նրանց գոյական որոշյալները սովորականի պես ստանում են համապատասխան դերանունների հոգերը, իսկ հայցականում, բացի դրանից, դերանունների վրա կրկնվում են նաև գոյականների նախդիրները, ինչպես՝ «ամուրդ այդ» (Եղշ., III, 56), «մինչև ցօրն ցայն» (Մատ., ԻԶ, 29)։

Նկատելի են վերոհիշյալ ընդհանուր օրինաչափություններից կատարվող հետևյալ մասնակի շեղումները։

1. Ընդհանուր կանոնին հակառակ, երբեմն ետադաս դերանունները դերվում են ոչ թե երկար, այլ կարճ ձևով, չխախտելով, իհարկե, հոգերի և նախդիրների կիրառության կանոնները, օրինակ՝ «ժողովրդեան բում այսմ» (Ելք., ԺԵ, 13), «ի մեծ գահոյս յայսմ» (Եղշ., III, ԺԶ, 83), «ի գահուդ յայդմ» (ՂՓ, II, ԻԼ, 113), «բանակի այնր» (ՂՓ, III, 2Է, 315), «ի ժամանակին յայնմ» (ՂՓ, II, ՍԷ, 219)։ Համաձայն ընդհանուր կանոնի, ընդգծված դերանուն որոշիչները համապատասխանաբար պիտի լինեին՝ այսմիկ, յայդմիկ, այնուրիկ, այնմիկ։ Այս շեղումները լայն տարածում չունեն և վերաբերում են գերազանցապես եզակի հոլովածներին։

2. Շատ սակավ գոյաբանի նախդիրը դերանվան վրա չի դրվում։ Այսպիսի շեղումներ նկատվում են առավելապես ըստ նախդրի դեպքում։ Ինչ վերաբերում է առ նախդրին, ապա այն նման կապակցություններում առհասարակ չի գործածվում։ Ահա՝ «ըստ բանիցս այսոցիկ» (Մենդ., ԻԹ, 12), «ըստ բանիդ այդմիկ» (Մենդ., ԽԴ, 7), «ըստ բանին այնուրիկ շարի» (Բ Օր., ԺԳ, 11), «զքաղաքօրն այնոփիւք» (Յեսու, ԺԸ, 8)։

Իբրև բացառություն, որոշյալի նախդիրը կարող է դրվել միայն նախադաս դերանուն որոշիչի վրա, ինչպես՝ «Իսկ թագաւորն Տրդատ՝ ուխտ զայս զնէր ընդ ամենայն մարդոյ...» (Ապթ., ԺԻԳ, 448)։

3. Գոյականը չի ընդունում համապատասխան դերանվան հոգը (ս, դ, ն)։ Երինակ՝ «յաւուր յայնմիկ» (Մատ., Ը, 13), «անուանք այսոքիկ» (Մատ., Ժ, 2), «ի տեղուդէ յայդմանէ» (Մենդ., ԺԳ, 14), «զամենայն դրանս զայսոսիկ» (Մենդ., ԻԹ, 13)։ Պետք է ասել, որ հոգի այսպիսի բացթողումն առավելապես նկատվում է այն դերանվամբ արտահայտված որոշիչների դեպքում։ Իսկ ինչ վերաբերում է այս դերանվան որոշյալին, ապա կարելի է ասել, որ հոգնակի

հայցականում նրա անհոգ գործածությունները շատ ավելի տարածված ու օրինաչափ են, քան հոգով գործածությունները, որոնք գրեթե բացառություններ են կազմում: Այս իրողության պատճառը, ըստ երևույթին, այն է, որ որոշյալը հոգնակի հայցականում արդեն մի և ունի: Հավանաբար, այս ս-ն հոգնակիության հետ մեկտեղ առաջացրել է նաև հոգի պատրանք, որի հետևանքով բուն ս-հոգի բացթողումն աստիճանաբար վերածվում է օրինաչափության: Օրինակ՝ «զսուակս զայսոսիկ» (Մատ., ԺԳ, 53), «զբանս զայսոսիկ» (Մատ., ԺԹ, 1), «ի զիրս յայսմիկ» (Յով., Ի, 30):

Այս կանոնը չի տարածվում դ, և հոգերի վրա, որոնք հոգնակի հայցականում կանոնավորապես դրվում են այդ, այն դերանունների որոշյալների վրա. օրինակ՝ «զաւուրսն զայնոսիկ» (Մարկ., ԺԳ, 20), «ընդ աբսղ ընդ այդոսիկ» (Թիւր., ԻԲ, 35), «ընդ ամենայն թագաւորսն ընդ այնոսիկ» (Յեսու., ԺԱ, 18):

Ս, դ, և հոգերը, ինչպես նկատել են նաև գրաբարի քերականները, գոյականի վրա հաճախ չեն դրվում այն դեպքերում, երբ նրա վրա, բացի այս, այդ. այն դերանուններից, դրված են նաև աստի, այտի, անտի և նման սպասարկու բառեր, որոնք ունեն ցուցական դերանունների և նրանց համապատասխանող հոգերի նշանակություն, ուստի և նրանց առկայությամբ, բնականաբար, վերանում է ս, դ, և հոգերի անհրաժեշտությունը այս, այդ, այն դերանունների համար: Օրինակ՝ «յանօրէն և յամբարիշտ աշխարհէ աստի յայսմանէ» (ՓԲ, V, ԻԴ, 183), «ի տեղուղէ աստի յայսմանէ» (Մենդ., ԺԹ, 14), «ի բսնից այտի յայդցանէ» (Երեմ., ԼԸ, 24), «ի վկայանոցի անդ յայնմիկ» (ՓԲ, I, ԻԸ, 188), «ի ժամանակի անդ յայնմիկ» (ՓԲ, VI, ԻԵ, 123):

4. Բացի նշված շեղումներից, շատ սակավ նկատվում են նաև հոլովական և թվային անհամաձայնության դեպքեր: Հոլովական անհամաձայնության դեպքում որևէ թեք հոլովով դրված գոյական որոշյալի վրա սովորաբար ուղիղ ձևով դրվում են այս, այդ, այն դերանունները. իսկ թվային անհամաձայնության դեպքում գոյականը դրված է լինում հոգնակի, իսկ նրա դերանուն որոշիչը՝ եզակի թվով: Այսպիսի կիրառություններում, այնուամենայնիվ, դերանունների վրա որոշյալի նախդիրների կրկնման, ինչպես նաև գոյականի՝ համապատասխան դերանվան հոգն ստանալու կանոնները պահպանվում են: Ահա՝ «բանիս այս» (ՂՓ, I, ԺԹ, 78), «ի խորհրդիս յայս» (ՂՓ, III, ԿԶ, 261), «որոնցում ցուցական դերանունները, ընդհանուր կանոնի համաձայն, պիտի լինեին՝ այսոբիկ, յայսմիկ: Իսկ հետևյալ օրինակներում՝ «աբս այս» (Գործ., ԺԶ, 17), «պարծանֆս այս» (ՊԿԲ, ԺԱ, 11), «ամենայն բանֆդ այդ» (ՂՓ, III, Դ, 358), «բանֆն այն» (ՓԲ, V, ԼԸ, 209), այս, այդ, այն դերանունները պիտի լինեին՝ այսոբիկ, այդոբիկ, այնոբիկ:

Նախադաս գործածվելիս այս, այդ, այն դերանունները համաձայնության մեջ դրսևորում են հետևյալ օրինաչափությունները՝

1. Ետադաս գոյականների վրա դրվում են կարճ ձևերով:

2. Նախդիրները չեն կրկնվում. համաձայն նախդիրի առաջադասության ընդհանուր կանոնի, նախդիրները դրվում են միայն նախադաս դերանուն որոշիչների վրա:

3. Որոշյալները չեն ստանում համապատասխան ս, դ, և հոգերը:

4. Որոշիչն ու որոշյալը թվով ու հոլովով համաձայնում են միմյանց հետ, բացի հոգնակի ուղղական, մասամբ էլ գործիական հոլովներից, որտեղ

այս, այդ, այն դերանունները սովորաբար դրվում են եզակի ձևով՝ հոգնակի գոյականների վրա։

Բերենք մի քանի օրինակ վերոհիշյալ կետերի վերաբերյալ՝ «ըստ այսմ օրինակի» (Յեսու, Ը, 8), «ի վերայ այդր վիմի» (Մատ., ԺԶ, 18), «այդմ պատուով» (ՂՓ, III, ԿԴ, 253), «ցայդ վայր» (Եղշ., VII, 136), «զայնու ժամանակաւ» (ՓԲ, III, Գ, 7), «յայնմ ժամանակի» (Մատ., Ը, 28), «այս կառք զարւանայիք» (Եզն., I, Գ, 14), «վասն այսց երկուց պատճառանաց» (Եզն., I, ԺԸ, 53), «ըստ կարգի այդց պարծանաց» (ՊԿԲ, ԺԱ, 17), «յայնց ժամանակաց» (Եղշ., II, 45), «այնու նշանագրօք» (Մհ, III, ՄԲ, 326), «ընդ այնու կարեօք» (Թոռն., 253), «յայն քաղաքս» (Թոռն. 77)։

Այս, այդ, այն դերանունների վերը հիշված կանոնները նույնպես բացարձակ չեն։ Ավելին, այստեղ շեղումներն ավելի շատ ու բազմազան են, քան ետադասի դեպքում։ Ցույց տանք դրանք առանձին-առանձին։

1. Ամենատարածված շեղումներից մեկը թվի համաձայնության խախտումն է, երբ հոգնակի որոշյալի մոտ նախադաս այս, այդ, այն դերանունները հաճախ մնում են եզակի, չնայած որ հոլովով համաձայնած են լինում. օրինակ՝ «վասն այսր պատճառանաց» (Գործ., ԻԸ, 20), «այսմ ևս յունցանաց» (Ելք., Ժ, 17), «զայսու աւուրքք» (Մհ, III, 313), «այդմ երախտեացդ» (ՓԲ, IV, ԺԱ, 59), «չեստ այնր ժամանակաց» (Թոռն., 366), «այնմ աղետից» (Թոռն., Ը9), «այնու նշանագրօք» (Մհ, III, ՄԲ, 326)։

2. Քիչ չեն այն դեպքերը, երբ այս, այդ, այն դերանունները անհամաձայն են մնում իրենց որոշյալի հետ միաժամանակ և՛ հոլովով, և՛ թվով։ Օրինակ՝ «փոխանակ այս մեծի յաղթութեանս» (Եղշ., II, 18), «այս գործով» (ՓԲ, IV, Դ, 66), «յայս ուխտէս» (ՂՓ, II, ԻԵ, 97), «այս սեանց խաչքն» (Ազթ., ՃԲ, 384), «այդ հրամանիդ» (ՂՓ, II, ԻԶ, 99), «յայն սերմանէ» (Եզն., II, Ժ, 99)։

3. Հաճախ նախադաս այս, այդ, այն դերանունների դեպքում ևս որոշյալն ընդունում է ս, դ, ն հոդերը։ 2-րդ կետում բերված օրինակներից շատերը վերաբերում են այս երևույթին։ Բերենք մի քանի լրացուցիչ օրինակներ ևս՝ «զայս ճշմարիտ հաւատս» (Ազթ., ԽԱ, 194), «այդր ամենակեցոյց նշանիդ» (Ազթ., ՃԶ, 400), «յայսմ ժամանակիս» (ՓԲ, V, Դ, 164), «կորուստ այդ իւրոյդ» (Մատ., ԻԶ, 9)։

4. Երբեմն նախադաս այս, այդ, այն դերանուններն էլ դրվում են երկար ձևերով և հոլովով ու թվով համաձայնում որոշյալին. օրինակ՝ «այսոքիկ քաղաութի նոցա» (Մնաց., I, Ա, 43), «այսոքիկ կսրոտութիւնք» (Մհ, I, 90), «ձեռամբն այնոքիկ գրչի» (Կոր., Ը, 50)։

5. Այս, այդ, այն դերանունները պահանջված հոլովի փոխարեն, խիստ հազվագեպ, դրվում են մի այլ հոլովով. օրինակ՝ «առ այնմ ժամանակաւ» (ՓԲ, VI, Ե, 224), «զու որ ի մանկութենէ յայդմ օրէնս սնեալ էիր...» (Եղշ., III, 62), որոնցում բերված դերանունները պիտի լինեին՝ այնու և յայդ կամ յայդոսիկ։

բ) Սոյն, դոյն, նոյն դերանուններով արտահայտված ուղղիչ

Սոյն, դոյն, նոյն դերանունները գործածվում են թե՛ իրի, թե՛ անձի անունների հետ և կատարում հիմնականում որոշիչ պաշտոն։

Չալրխյան-Այսերյանի գրաբար ձեռնարկում նշվում է, որ սոյն, դոյն, նոյն դերանունները «ցույց են տալիս նախապես ասվածի հետ նույնական լի-

ները»¹², Ահա՝ «ցայդ վայր եղև հրաման պատուհասիդ ձերոյ, և ի վերայ դուրին պատումասի՝ երթալ ձեզ յԱսորեստան...» (Եղշ., VII, 186—187), «քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ Պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց. և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին...» (Եղշ., I, 6)։ Սրանցում դուրին և նովին դերանունները մատնացույց են անում նախապես ասված պատումասիդ և օրինօք երկրորդական անդամները։

Սոյն, դոյն, նոյն դերանունները, ինչպես այդ ցույց է տվել Չալըխյանն իր ձեռնարկում, իմաստով հոմանիշ են սա, դա, նա, այս, այդ, այն դերանուննե-րին և հաճախ պեսպիսության համար փոխարինում են միմյանց։ Այս մասին իր դիսերտացիոն աշխատության մեջ հանգամանորեն խոսել է նաև Մ. Մի-նասյանը։ Նա նշում է, որ երբ հատկացուցիչը նախադասության նախորդ մա-սում մեկ անգամ արտահայտված է լինում սուրա, դուրա, նուրա... սեռական հոլովաձևերով, նախադասության շարունակության մեջ, 2-րդ անգամ հանդես գալու անհրաժեշտության դեպքում, սովորաբար փոխարինվում է սոյն, դոյն, նոյն դերանունների սեռական հոլովաձևերով, որոնք արտահայտում են այն նույն դերանունների իմաստը, որոնց փոխարինել են։ Ահա նրա բերած օրինակ-ներից մի երկուսը՝ «զի շարաբանօքն Քրիստոսի վայելիցեմք ի նուրա կամս և ի նորին վարդապետութեանն», «հանի զսուսերն ի նմանէ և հատի զզուխ նորին»¹³,

Երբ սոյն, դոյն, նոյն դերանունները գոյականի վրա դրված են սեռական հօլովով (սուրին-սուրուս, դուրին, նուրին-նուրուն, սոցին-սոցուն-սոցունց...), ապա նրանք կարող են մտածվել թե՛ իբրև որոշիչներ, թե՛ իբրև հատկացուցիչներ, բանի որ սեռականը միաժամանակ հատկացուցչի արտահայտման հիմնական հոլովն է։ Հետևաբար, այդ հոլովաձևերը միշտ չէ, որ աշխարհաբարում կարե-լի է թարգմանել նրանց ուղիղ ձևերով (սոյն, նոյն)։

Մ. Մինասյանն իր վերոհիշյալ աշխատության մեջ ցույց է տալիս, որ սոյն, դոյն, նոյն դերանունների սեռական հոլովաձևերի՝ որպես որոշիչներ կամ հատկացուցիչներ հանդես եկած լինելը շփոթելի է միայն այն դեպքում, երբ նրանց եզակի ձևերի մոտ (սուրին-սուրուն, դուրին, նուրին-նուրուն) հարա-կից գոյականը դրված է եզակի սեռական, իսկ հոգնակիների մոտ (սոցին-սոցուն-սոցունց)՝ հոգնակի սեռական, տրական և բացառական հոլովներով։ Մյուս դեպքերում շփոթություն առաջանալ չի կարող, քանի որ հատկացուցիչը նշված դերանունների մյուս հոլովաձևերով սովորաբար չի արտահայտվում։ Նա միաժամանակ մատնանշում է հետևյալ միջոցները, որոնցով, հիրավի, կարելի է որոշել արդյոք սոյն, դոյն, նոյն դերանունների սեռական հոլովաձևե-րը որպես որոշիչնե՞ր են գործածված, թե՞ որպես հատկացուցիչներ։ 1. Եթե այս դերանունների եզակի ու հոգնակի սեռական հոլովաձևերի և նրանց հարա-կից գոյականի միջև կա կա՛մ հոլովական, կա՛մ թվային անհամաձայնություն, ապա անկասկած է, որ նրանք գործածված են իբրև հատկացուցիչներ, քանի որ սոյն, դոյն, նոյն դերանուններով արտահայտված որոշիչները սեռականում հո-լովով ու թվով համաձայնում են իրենց որոշյալին։

12 Վ ր Թ. Չ ա լ ը խ յ ա ն, նշվ. աշխ., էջ 337։

13 Մ. Մ ի ն ա ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 195—196։

2. Երբ սոյն, դոյն, նոյն գերանունների սեռական հոլովածների մոտ հա-
բակից գոյականը դրված է եզակի սեռականով, իսկ հոգնակիների մոտ՝ հոգ-
նակի սեռական, տրական և բացառական հոլովներով, որոնք ձևական ոչ մի
տարբերություն չունեն, ապա այս գերանունների եզակի և հոգնակի սեռական
հոլովածների՝ որպես որոշիչ կամ հատկացուցիչ գործածված լինելը որոշելու
համար հերեհական առաջարկում է նախ՝ նկատի ունենալ նախադասության ընդ-
հանուր իմաստալին կողմը, և ապա՝ առհասարակ շարահասությունը։ Ըստ
նրա, սոյն, դոյն, նոյն գերանունների սեռական հոլովածների նախադաս գոր-
ծածությունները սովորաբար հանդես են գալիս իբրև որոշիչներ, իսկ ևստա-
դասները՝ հատկացուցիչներ։ Նա չի անտեսում նաև բացառությունները, երբ
վերահիշյալ գերանունների սեռական հոլովածներով արտահայտված հատ-
կացուցիչները դրված են լինում նախադաս¹⁴։

Համաձայնության մեջ սոյն, դոյն, նոյն գերանունները, ընդհանուր օրի-
նաչափությունների հետ մեկտեղ, ունեն բազմապիսի և բազմաբանակ շեղում-
ներ։ Թերևս սա է եղել պատճառը, որ գրաբարի քերականություններում բա-
վականի տարբեր կարծիքներ են արտահայտվել այս հարցի մասին։ Այսպես,
երինակ, Ս. Զուլալյանի¹⁵ և Մ. Չամչյանի¹⁶ այն կարծիքն են հայտնում, որ
սոյն, դոյն, նոյն գերանունները նախադասվելիս հոլովով ու թվով չեն համա-
ձայնում իրենց լրացյալին։ Հետագա քերականներից ոչ մեկն էլ այս տեսա-
կետն ամբողջությամբ չի պաշտպանել, որովհետև կան հակառակն ապացու-
ցող բազմաթիվ ակնառու փաստեր։

Մ. Սեբաստացին¹⁷, ընդհակառակը, պնդում է, որ սոյն, դոյն, նոյն գերա-
նունները գրեթե միշտ նախադասվում են իրենց որոշյալին և հոլովով ու թվով
համաձայնում նրան, բայց ոչ մի խոսք չի ասում բացառությունների մասին։

Գ. Ավետիսյանը գրում է, որ այդ գերանուններն անմիջապես դրվում են
դոյականի վրա, սովորաբար լինում նախադաս և հոլովով ու թվով պարտադիր
չեն համաձայնում. «...ուստի,—եզրակացնում է նա,—միօրինակ մարթ է ասել,
ի սոյն ատուր, կամ ի սմին ատուր»։ Գ. Ավետիսյանն ավելացնում է նաև, որ,
այնուամենայնիվ, առավել հաճախ և վայելչաբար հոլովական համաձայնու-
թյունը պահպանվում է, իսկ թվինը՝ ոչ¹⁸։

Ա. Բազրատունու կարծիքով, նախադաս գործածված հիշյալ գերանուննե-
րի համար առավել օրինաբար, այնուամենայնիվ, ևստդաս գոյականի հետ
հոլովով ու թվով համաձայնելն է¹⁹։

Եղած փաստերը վկայում են, որ գրաբարի սոյն, դոյն, նոյն գերանունները
գոյականի հետ համաձայնելիս ենթարկվում են հետևյալ ընդհանուր օրինա-
չափություններին։

1. Նրանք դրվում են իրենց որոշյալներից առաջ և սովորաբար համա-
ձայնում նրանց հետ հոլովով ու թվով, բացառությամբ հոգնակի ուղղական և
հայցական հոլովների, որտեղ նրանք միշտ ելակի են մնում, հանդես չեն գա-

14 Նույն տեղում, էջ 198—200։
15 Մ. Զուլալյանի, Գիրք որ կոչի քերականութիւն, Կոստանդնուպոլիս, 1785, էջ 158։
16 Մ. Չամչյանի, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1859, էջ 182—183։
17 Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 210։
18 Գ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 417—420։
19 Ա. Բազրատունի, նշվ. աշխ., էջ 357—359։

լիս սոյնք, դոյնք, նոյնք, սոյնս, դոյնս, նոյնս ձևերով. օրինակ՝ «ըստ սմին օրինակի» (Ոսկր., 33), «դովին մարմնովն» (Ագթ., ԽԱ, 193), «յաղագս նորին Յոհաննու» (ՓԲ, VI, Թ, 227), «վասն նորին իսկ սատանայի» (Եզն., I, ԺԿ, 37), «նովին հոգեկրօն արուեստին» (Կոր., ԻԲ, 82), «նմին իսկ Աբրահամու» (Խոռն., 218), «ի դոյն միտս» (Եղշ., VI, 169), «ի հրահանգս նոցուն մոզուց» (Եղշ., II, 52), «զնոյն անցս» (Եղշ., II, 42)։

2. Սովորարար հոգնակի գործիականում սոյն, դոյն, նոյն ղերանունները համաձայնում են հտադաս գոյականին միայն հոլովով, իսկ թվով մնում անհամաձայն, այսինքն՝ եզակի. օրինակ՝ «նովին նշանագրօք» (Կոր., VI, 44), «նովին հաւատովք» (Եղշ., II, 40)։

3. Նախդիրների և հոգերի կիրառության կանոններն այստեղ հիմնականում նույնն են, ինչ գոյականին նախադասված այս, այդ, այն ղերանունների նախադաս գործածության ժամանակ, այսինքն՝ սոյն, դոյն, նոյն ղերանունների ղեպքում էլ նախդիրները դրվում են նախադաս ղերանվան վրա և չեն կրկնվում հտադաս գոյականի հետ։ Քանի որ վերը բերված կետերի օրինակների մի մասը վերաբերում է նաև այս կանոնին, բավարարվենք մի քանի հավելյալ օրինակներ ևս բերելով՝ «ըստ նմին պայմանի» (Թիւք., ԺԵ, 24), «ըստ սմին օրինակի» (Ոսկր., 33), «ըստ դմին օրինակի» (Ագթ., ԺԸ, 107), «զդոյն պատուէր» (Եղշ., II, 18), «ի նմին ուխտէ» (Եղշ., 3), «ընզ նոյն արահետս» (Եզն., I, ԻԸ, 77), «առ նոյն բշնամիս» (Եղշ., III, 56), «ի նոյն գաւառաց» (ՄԽ, II, Ը, 117)։ Վերոհիշյալ կանոնից կատարվող շեղումները լինում են այսպես.

1. Նախադաս այս, այդ, այն ղերանունների նման սոյն, դոյն, նոյն ղերանունները ևս հաճախ հոլովով ու թվով չեն համաձայնում իրենց հտադաս որոշյալին, մնալով եզակի և անփոփոխ, չնայած որ գոյականը հանդես է գալիս եզակի և հոգնակի թվի տարբեր հոլովներով։ Սակայն այսպիսի կիրառությամբ աչքի է ընկնում գլխավորապես նոյն ղերանունը։ Օրինակ՝ «ի սոյն ժամու» (Թագ., III, ԺԹ, 2), «ի նոյն ամսեան» (Կոր., ԻԿ, 88), «ի նոյն հոգևոր ցօղոյն» (ՓԲ, III, Ե, 11), «ի նոյն տոհմէ» (ՂՓ, III, ԿԲ, 241), «նոյն մահու» (Ագթ., ԿԷ, 272), «նոյն շաւօք» (ՄԽ, II, ՁԹ, 240)։

2. Շատ սակավ սոյն, դոյն, նոյն ղերանունները հտադաս գոյականների հետ կարող են համաձայնել միայն հոլովով, իսկ թվով՝ մնալ անհամաձայն. օրինակ՝ «ըստ նմին զործոյ» (Ոսկր., 124), «զկնի սորին իրացս այսոցիկ» (ՓԲ, III, ԺԴ, 34), «ի սմին կողմանց» (Ագթ., Ա, 17), «զսմին աւուրք» (ՄԽ, II, ԻԶ, 143), «ի նմին օրինաց» (Եղշ., III, 87)։

3. Երբեմն հոգնակի որոշյալի հետ գործածվում են սոյն, դոյն, նոյն ղերանունների հոգնակի Լրկրորդ ձևերը՝ սոմին, դոմին, նոմին։ Այս դեպքում նրանք կանոնավորապես հոլովով ու թվով համաձայնում են գոյականի հետ ոչ միայն սեռական, տրական, բացառական, այլև մյուս հոլովներում. օրինակ օվասն դոցին իրաց» (Գործ., ԻԵ, 9), «նոմին իսկ առաքեալն» (Ագթ., ՂԲ, 353), «վասն նոցին իրաց» (Գործ., ԻԵ, 20), «զնոմիմք պատկերօք» (Ագթ., ԿԳ, 269)։

4. Նախդիրը հազվադեպ կարող է դրվել թե՛ ղերանվան, թե՛ գոյականի վրա, ինչպես՝ «...դարձեալ անդրէն ի նոյն հաստատեցաւ ի զոյն մարմնոյ իւրոյ» (Ելք., Դ, 7), «Եւ քանզի կասկած ունէր տակաւին ի նոցուն ի դահնացն, դարձեալ փոխեցին անտի զսուրբն յայլ տեղի» (Եղշ., VII, 181)։

Ա. Բազրատունին նշում է, որ սոյն, դոյն, նոյն ղերանունները գոյականի հետ թե՛ նախադաս, թե՛ հտադաս կիրառվելիս պահանջում են նախդիրների

կրկնություն²⁰։ Նրա բերած օրինակները վերաբերում են հիմնականում հետագա դարերին։ V դարի գրաբարում, ինչպես ասացինք, այդպիսի կանոն չկա, նկատվում են միայն բացառիկ դեպքեր։

Սոյն, դոյն, նոյն գերանունները, որպես կանոն, չեն կիրառվում ետադաս շարահասությունում։ Հազվադեպ օրինակներում միայն հանդիպում են նոյն գերանվան ետադաս գործածություններ, ինչպես՝ «Եւ կապիճ նոյն լիցի տալոյ եւ առնլոյ...» (Եզեկ., ԽԾ, 11), «...զօրէնս եւ զպաշտօն զնոյն ունի...» (ՂՓ, ԻԱ, 87), «...և սորա աստուածս զնոյն բարոզեն» (Եզն., Բ, 175)։ Գրաբարի ցուցական գերանունների մեջ պետք է մտցնել նաև մի և նոյն կապակցությունը, որը V դ. թեև անջատ, երբեմն էլ իր բաղադրիչների տարբեր շարահասությունում էր հանդես գալիս, բայց սկսել էր մեկ բառի արժեք ստանալ, արտահայտելով նոյն գերանվան նշանակությունը։ Մեկ բառի իմաստով էլ այն գործածվում է իբրև որոշիչ, շարահասովելով գոյականից թե՛ առաջ, թե՛ հետո և, սովորաբար, հոլովով ու թվով մնում անհամաձայն. օրինակ՝ «օրէն մի եւ նոյն կաջցէ եւ իրաւունք՝ մի եւ նոյն կաջցեն։ Եկին եւ բնակին...» (Ղևտ., ԻԴ, 22), «մի եւ նոյն աստղ» (Եզն., ԺԵ, 112)։

Հաճախ այս, այդ, այն և սոյն, դոյն, նոյն գերանունները հարադրվում են կամ միմյանց, կամ ինքն գերանվան հետ ու այդպիսի կազմությամբ գործածվում իբրև որոշիչ։ Երբեմն այդ հարադրությունների մի բաղադրիչը կարող է նախադաս լինել, իսկ մյուսը՝ ետադաս։ Նախդրավոր հոլովներում նախդիրը դրվում է ամեն մի գերանվան վրա՝ անկախ նրանց շարահասությունից։ Հոլովական, թվային ու հոդի համաձայնության մեջ ունենում են մոտավորապես այն կանոնները, ինչ նրանց առանձին բաղադրիչներով արտահայտված որոշիչները։ Ահա մի քանի օրինակ՝ «ի դոյն յայդ Վասակ» (Եղշ., 134—135), «ի նմին ժամուն յայնմ» (ՓԲ, է, 175), «ի սոյն այս խորհուրդս» (ՓԲ, Ե, 69), «զկնի սորին իրացս այսոցիկ» (ՓԲ, ԺԴ, 34), «վասն նոյն նորին իրաց» (ՓԲ, ԺԴ, 3)։

Ցուցական գերանունների այսպիսի կիրառությունները ունեցել են ոճական նշանակություն՝ սաստկացնելով տվյալ գերանվան նշանակությունը։

Երբեմն ցուցական գերանունները գոյականի վրա դրվում են սպասարկու բառի նշանակությամբ հանդես եկող ինքն գերանվան հետ միասին։ Վերջինս միշտ դրվում է ցուցական գերանուններից հետո, բայց՝ գոյականից առաջ։ Նախդրավոր հոլովներում ընդհանրապես նախդիրը դրվում է միայն ցուցական գերանուն բաղադրիչի և գոյականի վրա։ Իսկ թեք հոլովներում հազվադեպ են հանդես գալիս ու համաձայնում. օրինակ՝ «այն ինքն մահ» (ՓԲ, Մ, ԻԴ, 217), «սոյն ինքն մշտնջենաւորութիւն» (Ազթ., ՂԹ, 343), «զդոյն ինքն զԳրիգորդ» (Ազթ., ՃԺԲ, 417), «նոյն ինքն Բէլ» (ՄԽ, I, Ե, 21), «նոյն ինքն Խրուանդ» (ՄԽ, II, ԽԲ, 166)։

զ) Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի, այսչափ, այդչափ, այնչափ, այսքան, այդքան, այնքան, նոյնքան, այսպէս, այդպէս, այնպէս դերանուններով արտահայտված որոշիչ։

Գրաբարի հին բերականություններում այս գերանուններն առանձնացվում են ցուցական գերանուններից և մտցվում, այսպես կոչված, միջակ անունների մեջ՝ «վերաբերական անուններ» անվան տակ։

²⁰ Նույն տեղում, էջ 406—407։

Այս դերանունները, գործածվելով որպես որոշիչ, շտաբերակված կերպով արտահայտում են առարկայի որակական և քանակական հատկանիշներ և, ինչպես մյուս ցուցականները, այս կամ այն իմաստը դրսևորում են 1-ին, 2-րդ և 3-րդ դեմքերի նկատմամբ ունեցած տարածական և ժամանակային հարաբերությամբ:

Այսպիսի, այդպիսի, այնպիսի դերանուններն արտահայտում են հատկանիշի ընդհանուր իմաստ և նախադասության մեջ կատարում հիմնականում որոշիչ պաշտոն:

Այս դերանուններն առաջացել են պէս բառով բարդված ցուցական դերանուններից (այսպէս, այդպէս, այնպէս...)՝ է>ի հնչյունափոխությամբ: Սակայն դեռևս V դարում այսպէս, այդպէս, այնպէս... դերանունների հնչյունափոխված տարբերակները՝ այսպիսի, այդպիսի, այնպիսի... գիտակցվել ու ճանաչվել են որպես անկախ, նոր սկզբնաձևեր: Այս մասին է վկայում այն փաստը, որ նրանց երկու տարբերակներն էլ V դարում միաժամանակ գործածվում էին գոյականի տարբեր հոլովաձևերի հետ: Բացի այդ, որ շատ կարևոր է, դեռևս V դարից նրանք ունեին իմաստային-քերականական մի շարք առանձնահատկություններ, որոնց շնորհիվ ավելի ու ավելի էր որոշակի դառնում նշված ցուցականների տարբերությունը: Այսպես՝ եթե այսպէս, այդպէս, այնպէս... դերանունները կարող էին արտահայտել թե՛ առարկայի հատկանիշ, թե՛ բայով կամ ածականով դրսևորվող հատկանիշի հատկանիշ, ապա այսպիսի, այդպիսի, այնպիսի... դերանունները՝ միայն առարկայի կամ առարկայացած հասկացության հատկանիշ: Սրանով էլ պայմանավորված էր նրանց շարահյուսական ֆունկցիաների տարբերությունը. եթե առաջինները կարող էին կատարել թե՛ որոշիչ, թե՛ պարագայի պաշտոն, ապա երկրորդները՝ միայն որոշիչ: Այնուհետև, այսպէս, այդպէս, այնպէս ...դերանունները գոյականի հետ գործածվելիս միշտ անփոփոխ էին մնում, իսկ մյուսները երբեմն հոլովով ու թվով համաձայնում էին իրենց որոշյալին: V դարից սկսած այսպէս, այդպէս, այնպէս... դերանուններն ավելի ու ավելի հատկացվում էին պարագայի պաշտոն կատարելու՝ հազվադեպ դրսևորվող իրենց որոշյալին ֆունկցիան թողնելով աստիճանաբար այսպիսի, այդպիսի, այնպիսի... դերանուններին, որոնք հիմնականում որոշիչ պաշտոն էին կատարում:

V դարի մատենագրության լեզվում այսպիսի, այդպիսի, այնպիսի... դերանունները հաճախակի են գործածվում գոյականների հետ և ունեն գերազանցապես նախադաս շարահյուսություն: Նախադաս գործածվելիս ընդհանրապես հոլովով ու թվով չեն համաձայնում ետադաս որոշյալի հետ՝ եզակի ուղիղ ձևով, անփոփոխ դրվելով եզակի ու հոգնակի գոյականի թե՛ ուղիղ, թե՛ լուրջ թեք հոլովաձևերի վրա, օրինակ՝ «զկնի այսպիսի իրաց» (Մհ, I, 1(1Ա), 482), «այսպիսի անհնարին աղէտից» (ՂՓ, I, ԺԳ, 40), «զայսպիսի սխանչիսս» (ՓԲ, IV, Դ, 62), «այնպիսի տանջանօք» (Եզն., I, ԻԱ, 59), «այդպիսի ախտի» (ՂՓ, II, ԽԴ, 174), «այդպիսի անհաբոթիւնք» (Եզն., I, Դ, 14), «այնպիսի լեռանց» (ՓԲ, III, ԺԴ, 32):

Երբեմն այս դերանունները հոլովով ու թվով կամ միայն թվով համաձայնում են ետադաս որոշյալի հետ. օրինակ՝ «այսպիսում ճղնութեան» (Մհ, I, Գ, 10), «այդպիսեաւ... ջերմութեամբ» (Մհ, III, 1Դ, 298), «այնպիսոյ բարւոյ աստուծոյ որդի» (Եզն., II, Ժ, 99):

Այսպիսի, այդպիսի, այնպիսի ...*դերանունները ետադաս շատ քիչ են գործածվում՝ առավելապես ուղղական և հայցական հոլովներում։ Այս դեպքում նրանք ենթարկվում են նախադաս որոշյալի համաձայնության ընդհանուր կանոններին, այսինքն՝ հոլովով ու թվով համաձայնում են նախադաս գոյականի հետ։ Սակայն, ի տարբերություն այս, այդ, այն, սոյն... դերանունների, սրանց վրա գոյականի նախդիրը չի կրկնվում, իսկ գոյականն էլ իր հերթին սովորաբար չի ստանում համապատասխան դերանվան հոդը։ օրինակ՝ «Բղրով այսպիսեաւ» (Մհ, 111, Մէ, 335), «այլ այնպիսի» (Մննդ., հԱ, 38), «բազում խորհուրդ այնպիսիք» (Թոռն., 99), «ձեռնարկուրինք այնպիսիք» (Մհ, 11, 2Ը, 238), «ընդ բազումս նոյնպիսիս» (Ոսկր., 458)։*

Հաճախ այս դերանունները հարադրվում են ո՛ք, ի՛մն, ի՛նչ անորոշ դերանուններին և նրանց հետ միասին գործածվում թե՛ անկախաբար, թե՛ իբրև որոշիչ՝ շարադասվելով գոյականից առաջ։ Իսկ վերոհիշյալ անորոշ դերանունները դրվում են ցուցական դերանուններից հետո, երբեմն էլ առաջ՝ մնալով միշտ անհամաձայն։ օրինակ՝ «այնպիսի ո՛ք կի՛ն» (Ոսկր., 466), «զայսպիսի ի՛մն բանս» (Թոռն., 116—117), «այսպիսի ի՛մն օրի՛նօք» (Ոսկր., 269), «այսպիսի ի՛նչ բանս» (Ոսկր., 128), «Այլ դու ի՛նչ այնպիսի լկտիս չխօսիս...» (Ոսկր., 567)։

Այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ, այսքան, այդքան, այնքան, նոյնքան դերանունները, դրվելով գոյականի վրա, ցույց են տալիս նրա չափն ու քանակը՝ դարձյալ ըստ 1-ին, 2-րդ և 3-րդ դեմքերի նկատմամբ ունեցած տարածական հարաբերության։ Այս դերանուններն ունեն հիմնականում որոշչալին գործածություն։ Գրեթե միշտ շարադասվում են որոշչալից առաջ և թվով ու հոլովով չեն համաձայնում նրան։ Նախդիրների և հոգերի կիրառական առանձնահատկությունները նույնն են, ինչ այսպիսի, այդպիսի, այնպիսի... *դերանունների դեպքում։ Օրինակ՝ «յետ այսչափ հաբցից» (Աղթ., Ժ, 70), «այսչափ ամս կամ այնչափ կրօնս» (Ոսկր., 11), «այսչափ հաւատս» (Ղուկ., է, 9), «այդչափ սակաւ արամբք» (ՂՓ, 111, 2Բ, 330), «յայդչափ բիւրապատիկ բարութիւնս» (Ոսկր., 107), «այնչափ ազգք» (ՊԿԱ, ԺԴ, 10), «այնչափ նշանս» (Յով., ԺԲ, 37), «այնչափ շարեօք» (Թոռն., 68), «այնչափ աշակերտացն» (Ոսկր., 5)։*

Այսպէս, այդպէս, այնպէս... *դերանունները ցույց են տալիս թե՛ հատկանիշի, թե՛ հատկանիշի հատկանիշի ընդհանուր զաղափար։ Սակայն հիմնականում ցույց են տալիս գործողության հատկանիշ և ըստ այնմ էլ գործածվում իբրև պարագաւ։ Երբեմն սրանք կատարում են որոշիչ պաշտոն։ Այս դեպքում նրանք միշտ դրվում են գոյականից առաջ և հոլովով ու թվով երբեք չեն համաձայնում նրա հետ, օրինակ՝ «քանդի զդօրքն Յունաց վառեալ էին ի զէնս ոսկւոյ և արծաթոյ, և երիվարք նոցա նոյնպէս զարդու...» (Մհ, 111, Լէ, 303)։*

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղբ.—Ազաթանդեղեայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մըկերրտչեան և Ստ. Կանայեանց, Տփլիս, 1909։

Եզն.—Եզնրկայ վարդապետի Կողբացւոյ Նղծ աղանդոց, Թիֆլիս, 1914։

Նղշ.—Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ րադդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957։

- Խոռոն.—Թոռնեան Թ., Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, Վիեննա, 1891:
- Կուր.—Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941:
- Ղ.Փ.—Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907:
- Միւ.—Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփլիս, 1913:
- Պ.Բ.—Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
- Ոսկր.—Յովհաննու Ոսկեբերանի Յաւետարանագիրն Մատթէոս, գիրք Ա և Բ, Վենետիկ, 1826: